ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *15 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Նվեր Առաքելյանը, Վիգեն Գրիգորյանը, Մելսիկ Զաքարյանը, Նվեր Զաքարյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սնակ Միքայելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N01 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի.

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 15-ի N 01 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին
2.Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին
3.Ֆինանսական նվիրատվություն ցուցաբերելու մասին
4.Փոխադրամիջոցների գույքահարկի գումարները վերադարձնելու մասին
5.Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման և գույքագրման մասին
6.Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի ընթացքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N176-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆՈՒՀԻ ԲԱՐԵՂԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02/

Լսեցին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

1. Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10.07.01 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից որպես աջակցություն գումար հատկացնել հետևյալ անձանց.
1. 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ գումար հատկացնել Արցախյան ազատամարտում վիրավորում ստացած անձանց յուրաքանչյուրին 50000 /հիսուն հազար/ դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Աջակցությունը տրամադրվում է վիրավոր անձանց կամ վերջիններիս կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթերի և վիրավորումը հաստատող բժշկական փաստաթղթերի ներկայացման դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03/

Լսեցին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Երվանդ Մխիթարյանի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N Ս-2171 դիմումը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 176-Ն որոշմամբ հաստատված հավելվածում «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» /4819/ հոդվածով նախատեսված ծախսերից որպես նվիրատվություն 2021 թվականի հունվար ամսից մինչև 2021 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ յուրաքանչյուր ամիս 60000/վաթսուն հազար/ դրամ փոխանցել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:
2.Սույն որոշման կատարման ապահովումը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04/

Լսեցին
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Համաձայն Հարկային Օրենսգրքի 252-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 474 տան բնակիչ Աղվան Ռաֆայելյանի 2020 թվականի դեկտեմբերի 12-ի N Կ-1089 դիմումը, Վանատուր թաղամասի 516 տան բնակիչ Հայկ Սարգսյանի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N Կ-1141 դիմումը.

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից հետ վերադարձնել վաճառքից հետո առաջացած գերավճարի չափով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 474 տան բնակիչ Աղվան Ռաֆայելյանին 8950 /ութ հազար ինը հարյուր հիսուն/ դրամ, Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 516 տան բնակիչ Հայկ Սարգսյանին 5354/հինգ հազար երեք հարյուր հիսունչորս/ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով.

Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12 հավելվածների:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Համաձայն« Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի.

Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայնN 1, 2, 3 հավելվածների:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 07/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 176-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 4-րդ մասով.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի «Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N176-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08-Ն/

Ավագանու անդամներ՝

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը